

Լ ՈՒՄԱՅ

ԴՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ

1900 թ.

Բ. ԴԻՔԻ

ՅԱՆԵԼՈՒԱԾ

Ա.

ԿԱՆՈՆՔ Ս. ԺՈՂՈՎՈՑ

ԳՈՐԾ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍ. ԴԱԽԵԱՆԻ

17—32 էր. (շարունակելի)

Բ.

ԿՈՅՐ ԵՐԱԺԻԾՏԸ

ՎԼ. ԿԱՐԱԼԷՆԿՕԻ

ԹԱՐԳՄ. ՄՈՒՇԷ ՎԱՐԴԱՊԵՏԻ

49—112 էր. (վերջը միւս անգամ)

4 ոյիա Ի Պէնտէկոստէ մինչև Նվարդալառն, երկու շաբաթ ուտեն և մին պահի, Նվարդալառն տօն է առաքելոցն, և մատուռն ըստ հնումն՝ տօն տաղաւարահարաց. և ի նորումս նաւակատիք սուրբ տեղեաց Երուսաղէմի, և մարտիրոսաց յէշատակք:

Ներս. Որ ի չորեքշաբաթի կամ յուրբաթի ակամայ
էզր. միս եկեր, Գ. շաբաթ պահեսցէ, և որ կամաւ Գ.
Գրեգ. ամ, և կամ տացէ յեկեղեցին Մ. դրամ և Լ. յաղ-
կաթ. ճգ ռնկդ քատս, և թէ քահանայ զայս առնէ՝ կրկին է կարգն:

Բ ժող. Ամենայն պահք ըստ կանոնաց առանց ձկանց
Սոսյ և ձիթոյ և գինւոյ լիցի, բացի հարկէ հիւանդու-
մե Ժե թեան՝ և առաւել աղուհացիցն և ուրբաթուն և չորեքշաբաթուն, որք Քրիստոսի չարչարանաց աւուրք են՝ որ զայս լուծանէ տուգանհացեն, և յաղքատս տացեն և պահօք վճարեսցեն Աստուծոյ:

Դ.

ՅԱՂԱԳՍ ԶՆՌՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՍՅ, Ե-
ՐԻՑԱՆՅ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ:

Առաք. Կարգեցին առաքեալք և եղին հաստատու-
ժբ ժբ թեամբ, եթէ եկամուտ ոք, կամ բնակաւոր, որ ոչ գիտիցէ զհաւատս ճշմարիտ եկեղեցոյ սրբոյ, և զկարգս և զօրէնս՝ որ կարգեալ է ի նմա. մի լիցի առաջնորդ և հրամանատար յեկեղեցւոջ. և մի ոք կարգեսցէ զայնպիսին՝ զպոռնկեալսն, և զշնացեալսն, և զայլագործսն յերիցութիւն, կամ ի սարկաւազութիւն, և կամ յայլ ինչ սպասաւորութիւն եկեղեցւոյ մի մերձեցուցեն. զի մի կարգեալքն ընդ նօքօք թիւրեսցին. զի եթէ ստուերք հանդերձելոցն Մովսիսի՝ զանարատն ընտրէր ի սպասաւորութիւն խորանին, ո՞րչափ ևս առաւել, որ նորոյս ուխտի է միջնորդ:

ժգ ժգ Կարգեցին առաքեալք և եղին հաստատու-
թեամբ, եթէ իցէ ոք երկմիտ ի հաւատս, և չիցէ ճշմարիտ ի պաշտաման Տեառն՝ մի ձեռնադրեսցի. զի մի այլոցն ի հեղգութիւն խմոր չարութեան լիցի: Որպէս գրեալ է, թէ անիծեալ է որ գործէ զգործ Տեառն հեղգութեամբ, նա զմարդիկ խաբէ և ոչ զԱստուած, զայն՝ որ ոչն հաստատին կամակորութիւնք առաջի նորա:

ի ի Կարգեցին առաքեալք և եղին հաստատութեամբ, և թէ ի կարգէ քահանայութեանն, ընտրեալքն, անարատքն, և որ սուրբ ի մամոնայէ իցեն, օրինաց և կարգի եկեղեցւոյ հմուտք. եթէ և յանարգաց ոք իցէ, ի Քահանայապետութիւն և ի զբխաւորութիւն կացուցեն, միջնորդ լինել ընդ մարդիկ և ընդ Աստուած. զի երեսացի գլուխ և առաջնորդ ամենեցուն. զի ի ձեռն նորա խնդրեսցի չարութիւն և բարութիւն, մեղք և արդարութիւն ամենեցունց. զի դէտ և Հովիւ է՝ իրրև զՍամուէլն որ շրջէր և կարգէր և հրաման տայր ըստ մարգարէութեանն Նդէկիէլի:

իա իա Կարգեցին առաքեալք և եղին հաստատութեամբ, և թէ որք լուկ են ի ստացուածոց սոսկ և ի մամոնայէն, և չերթան զկնի արծաթաշահից, և ձեռք իւրեանց սուրբ են ի կաշառաց, և միտք իւրեանց յստակ ի չարութենէ, և խորհուրդք իւրեանց կատարեալ են ի սէրն Աստուծոյ, նոքա ընտրեսցին ի պաշտօն սեղանոյն Տեառն: Զի եթէ զՂևտացիսն յամենայն իմեքէ ի կալուածոց և ի բաժնէ եղբարցն հեռացուցեալ՝ ապա մերձեցուցանէր առ ինքն, որչափ ևս առաւել՝ որ նորոյ ուխտիս սպասաւորք՝ միջնորդք և պաշտօնեայք Քրիստոսի, անարատք իցեն և անմեղք:

իբ իբ Կարգեցին առաքեալք և եղին հաստատութեամբ, թէ ամբարտաւանք, հպարտք, և սէգք, և սնապարծք, ատեցողք և արեցողք, ուսումնատեսցք և քնէածք, յոյլք և նախանձոտք, և ցանկացողք չարեաց, և պատուասէրք, խիստք և նեղսասիրտք, ցոփաստէրք և յանդգունք, անգութք, անողորմք, կուռղք և ոխակալք, քսմոսք և շողմոզք և որ ինչ նման են սոցին, մի մերձեսցեն ի պաշտօն քահանայութեան. վասն զի գրեալ է թէ՝ ի բաց կացէք յինէն ամենեքեան, ոյք գործէք զանօրէնութիւն:

Առաք.
Ի ձեռն
Կղէմ.

ա Նպիսկոսոս ձեռնադրեսցի յնպիսկոպոսաց՝
ի յերկուց կամ յերկոց:

բ լգ Երեց կամ սարկաւազ, կամ այլ ի ժառանգաւորաց, ի միոջէ նպիսկոպոսէ լինել:

ժե խթ Որ ընդ երկուս ամուսնութիւնս խառնակեցաւ յետ մկրտութեանն, կամ հարճս ստացաւ, ոչ կարէ

լինել եպիսկոպոս, կամ երէց կամ սարկաւազ, կամ բնաւ իսկ ի քահանայական կարգէ:

ժգ ծ Որոյ զայրի առեալ է կին, կամ զհասեալ, կամ զաղախին, կամ ըզրոզ, ոչ կարէ եպիսկոպոս լինել, կամ երեց, կամ սարկաւազ, կամ բնաւ իսկ ի քահանայական կարգէ:

ժէ ծա Որոյ՝ զերկուս քորս առեալ է՝ և կամ զքեռորդի, ոչ կարէ ժառանգաւոր լինել:

ժթ ծգ Ներքինի ոք՝ եթէ ի բռնութենէ մարդկան եղև, կամ ի հալածանս կտրեցան արականքն, կամ այնպէս իսկ ծնաւ, և էր արժանի եպիսկոպոսութեան, եղիցի:

ի ծդ Որ ոք զինքն կրճատեաց, ոչ եղիցի քահանայ, զի անձնասպան է, և Աստուծոյ արարածոյն թշնամի:

իա ծե Եթէ ոք ի վիճակիւց զինքն կրճատեաց, ի բաց լուծցի, քանզի սպունդ եղև անձին իւրում:

իէ կա Եթէ ոք եպիսկոպոս ի ձեռն ընչից ժառանգաւորութեան՝ այսմ պատուոյ հասանիլ կարաց, կամ երեց կամ սարկաւազ, ի բաց լուծցի, նաև որ ձեռնադրեացն ի բաց հատցի ամենևին, միանգամայն և ի հաղորդութենէն՝ որպէս զՍիմոն մոգ՝ յառաքելոյն Պետրոսէ:

ծգ զ Եթէ ամբաստանութիւն ինչ եղիցի զհաւատացելոց՝ պոռնկութեան, կամ շնութեան, կամ այլ ինչ գործոց՝ ի բաց հրաժարելոց, և յանդիմանեացի, ի ժառանգութիւն մի եկեացէ:

հա ճե Եթէ ոք խեղ ակամբ է, և վիրաւորեալ անդամօք, և արժանի իցէ եպիսկոպոսութեան, եղիցի. քանզի ոչ խեղութիւն մարմնոյ չլինել զնա արժանի՝ հրամայէ, այլ անձին պղծութիւն:

հբ ճգ Խուլ և կոյր՝ մի լիցի եպիսկոպոս, ոչ իբրեւ զպղծեալ, այլ զի մի եկեղեցոյքն խափանեացին:

հգ ճէ Եթէ ոք դև ունիցի՝ ժառանգաւոր մի լիցի, իսկ մաքրեալն ընդունելի եղիցի, և եթէ իցէ արժանի՝ եղիցի:

հդ ճը Ջառ ի հեթանոսաց եկեալն և մկրտեալն՝ և կամ ի խառնակ վարուց, ոչ իրաւացի է վաղվադակի ընձեռել յեպիսկոպոսութիւն. քանզի անիրաւ է, զոր չեն է փորձեալ, այլոց լինել վարդապետ. բայց եթէ երբեք՝ յաստուածային շնորհացն եղիցի:

հզ ճժ Ծառայս ի ժառանգաւորութիւն ընդունել¹
առանց տէրանցն կամաց, ոչ հրամայեմք ի տրտ-
մութիւն ստացողացն. քանզի տանց կործանումն է
այս զործ. ապա եթէ արժանի երևեսցի ծառայն,
առ ի ձեռնադրութիւն աստիճանի, որպէս Ոնեալի-
մոսն երևեցաւ, և թողացուցեն տեարք իւրեանց,
և ազատեսցեն և ի տանէն ի բաց առաքեսցեն,
եղիցի:

Հարան
հետեւ.
առաք.

Եւ յայնպիսին դարձեալ ծանր նստեալ նախ ա
մուսնութեանն, մի սարկաւազութեան կամ երի-
ւ ճլթ ցութեան լինիցի վերակացու:

Ներկելոյ

Վասն այնոցիկ՝ որք յարտաքնոցն յայլաղան-
բ ճխը դացն՝ որք կամիցին հաւատալ, և քո առեալ վերս-
տին ծնցես աւագանաւն, և վարդապետեսցես գու-
սումն զրոց սրբոց, կամ եղև սուրբ ժողովոյն, բայց
առանց փորձելոյ և քննելոյ և ամենևին ի վերայ,
հասանելոյ, մի հաւատասցեն ի նա զիշխանութիւն
եկեղեցւոյ, և զօրինաց մերոց, մինչեւ արմատ առ-
ցէ եւ հաւաստեաւ սրտիւ իւրով՝ իմասցի զգօրու-
թիւն Աստուծոյ մերոյ, եւ մի մատաղատունկ՝ զի
մի հպարտացեալ ի դատաստան հատանայի անկցի:

Գ ճխթ

Վասն այնոցիկ՝ որ մատաղօրեայքն իցեն՝ և
մտօք խակք, ուսմամբ տխմարք, կարգաց տգէտք,
օրինաց անտեղեակք, խօսիւք յահուրք, գնացիւք
հայթաք եւ գինեմուրք՝ վաղվաղակի մի մերձեցուցա-
նել զնոսա ի սարկաւազութիւն, կամ եղև սուրբ
ժողովոյն: Այլ եթէ օտարաշխարհիկ ոք իցէ յայլոյ
վիճակէ՝ յայլոյ գաւառէ՝ ոչ սնուցեալ քո և ոչ ու-
սուցեալ, զայնպիսին յօժումն մի՛ մերձեցուցես,
ըստ առաքելոյն, որ ասէ, ձեռս վաղվաղակի յուրուք
վերայ մի դնիցես, եւ մի կցորդ լիցիս մեղաց օ-
տարաց:

Ը ճծդ

Որք անուանեն զինքեանս երբեմն սուրբս՝
մերձենալ յառաքելական և կաթողիկէ եկեղեցի,
կամ եղև սուրբ և մեծ ժողովոյն, զի ձեռնադրու-
թիւնս ընկալցին, և ապա կացցեն ի պաշտամանն,
նախ քան զամենայն՝ զրով խոստովանութիւն տա-
ցեն, զի յանձին կալցեն՝ և զհետ երթիցեն ըստ
կարգի կաթողիկէ եկեղեցւոյ՝ այսինքն օրինացն
հաւասարի:

Վասն այնոցիկ՝ որ մինչդեռ ի հալածանս էին,
անկան ի ճշմարտութենէն, վասն այնոցիկ և ամբ

կարգեալ են և ժամանակք ընտրեալ. զի յանձն առ-
ցեն զամենայն՝ զինչ եւ հաճոյ եղեւ կաթուղիկէ
եկեղեցւոյ՝ ուր եւ իցեն ամենեքեան, թէ ի գիւղս,
թէ ի քաղաքս. եւ նոքին միայն գտանիցին՝ ձեռ-
նադրեսցին, ուր եւ գտանիցին, և ի պաշտաման
կացցեն, ըստ նմին սովորութեան եւ ամենայն ոք
որ կաթուղիկէ եկեղեցւոյ, առ եպիսկոպոսք եւ ե-
րեցք մերձեսցին. յայտ է՝ զի եպիսկոպոս եկեղեց-
ւոյն՝ կալցի զպատիւ եպիսկոպոսին, այլ որ անուա-
նեալ կաթարոսացն եպիսկոպոս, զերիցու պատիւ
կալցէ. բայց եթէ կամ իցէ եպիսկոպոսին, զպատիւ
անուանն միայն տալ նմա. ապա եթէ՝ այս նմա-
հաճոյ ոչ իցէ, զմտաւ ածցէ՝ կամ տեղի կամ գա-
ւառ վերակացութեան, կամ երիցութեան. վասն զի
ի պաշտամանն կացցէ, զի մի ի քաղաքին երկու
եպիսկոպոսք երեսցին:

Նիկ.թ Ընդ է պարտ զկրճատեալսն՝ եւ զներքինի ա-
մ ակէ բարեալ զինքեանս՝ ի վիճակ քահանայութեան յա-
ռաջ ածել:

Բ ակը Ընդ է պարտ զհեթանոսաց զնորատունկս՝ և
զնոր ուսումնս, առ ժամայն եպիսկոպոսութիւն յա-
ռաջ ածել:

Դ ճհ Ընդ է պարտ՝ եպիսկոպոս ձեռնադրել՝ առանց
երից եպիսկոպոսաց:

Ը ճհդ Պարտ է ձեռնադրել զայնոսիկ՝ որ ի Հաւաս-
տացւոց ժառանգութենէն գրովք հաւանեալ են
ուղղափառութեան հաւատոյ. թէպէտ եւ եպիսկո-
պոսք իցեն՝ զեկեալսն օժանել:

Ը Դդ Ընդ է պարտ զչնացեալսն ի քահանայութիւն
մատուցանել:

Խա մէ Եթէ կին ուրուք շնացաւ՝ մինչդեռ աշխարհա-
կան էր, եւ յայտնի գտցի ընդ յանցանօք, զայնպի-
սեաց զսրս՝ ոչ է արժան ի քահանայութիւն մա-
տուցանել. իսկ եթէ յետ ձեռնադրութեան գտցի
կինն ի շնութեան, արձակել արժան է. ապա եթէ
ունիցի ի կնութեան, ոչ կարէ լինել քահանայ:

Խբ մը Ընդ է պարտ նախ քան զերեսուն ամն ձեռ-
նադրել քահանայ:

Խգ մթ Որք ի հիւանդութեան մկրտեցան՝ մի ձեռնա-
դրեսցին ի քահանայութիւն, քանզի ոչ հաւատացին,

բայց եթէ երկիւղածութեամբ կեցցեն, կամ հարկէ ինչ լինիցի:

հգ մլթ Ոչ է պարտ յօտարաց՝ առանց յանձնարարական թղթոյ՝ ի քահանայութիւն մատուցանել:

ձդ մծ Ոչ է պարտ զառժամայն մկրտեալսն՝ ի քահանայութիւն մատուցանել:

ձթ մծե Պարտ է եպիսկոպոս՝ ընտրութեամբ եպիսկոպոսաց լինել:

Ան- Ոյք յառաջ քան զմկրտութիւնն ընդունել՝ զո-
կելւ- հեցին, և յետ այսորիկ մկրտեցան, կամ եղեւ յաս-
ժգ յդ տիճան մերձեցուցանել զայնպիսիսն, յասն զի սըրբեցան աւագանաւն:

Նոյ- Վասն՝ որք պատրաստեալ են ի քահանայու-
կես- թիւն՝ եւ կանայս ունիցին. թէ մինչչեւ ի քահանայութիւն մերձեալ իցէ եւ կինն շնայցէ, արձակեացի կինն, եւ առն չիշխէ լինել, եւ այլն ի քահանայութիւն մատիցէ, ապա եթէ՝ կամք իցեն կալ ընդ կնոջն, քահանայ ոչ եւս կարէ լինել, զի ոչ ընդունի զնա եկեղեցի եւ կանոն:

ժգ յլղ Կամ եղեւ մեծ ամենայն ժողովոյն, թէ մինչև ցերեանամեանս, մի ոք օծցի ի քահանայութիւն. զի փորձեսցի եւ ընտրեսցի, պիղծն ի սըբոյն ի բաց պարզեսցի. քանզի եւ տէրն մեր՝ երեսնամեան էր՝ յորժամ առ զօծումն մկրտութեան, եւ սկսաւ զնոյն օրինակ ուսուցանել ամենեցուն. ութօրեայ մկրտիլ, իսկ երեսնամեայ օծանիլ ի քահանայութիւն:

ի յխ Եւ սարկաւագունս՝ ըստ պիտոյից արժան է առնել, որչափ տեղիքն եւ պէտքն խնդրեսցին, եւ մի աւելի ինչ, զի մի ցոփութիւն լինիցի:

Անտ. Եպիսկոպոս ոչ է արժան ձեռնադրել՝ առանց
ժթ յձգ ժողովոց եպիսկոպոսաց՝ եւ առաւել՝ որ մայրաքաղաքաց եպիսկոպոսն իցէ՝ յիշխանութենէ անտի, այլ սմա ամենայն իրօք պարտ և պատշաճ է անդ լինել. լաւագոյն եւս է՝ զի ամենեքին՝ որ առ նովաւ իցեն յիշխանութեան՝ լծակիցք ընդ նմա իցեն, զորս արժան է առ իւր կոչել թղթով, որ մայրաքաղաքաց եպիսկոպոսն է, և եթէ եկեսցեն ամենեքեան, առ բարի եղեւ, ապա եթէ՝ դժուարագոյն է այս լինել, մեծ մասին ի նոցանէ գալ արժան է, կամ թղթով միահամուր լինել. եւ այսպէս հանդերձ բազմօք գալով՝ կամ հաւանելով, հաստատել զայնպիսին:

ի տեղւոյ իւրում, յոր տեղի օծաւն, ապա եթէ՝
այլ ինչ, որ արտաքոյ քան զսահմանեալսն առնի-
ցեն, անուժ և անհաստատ լիցի ձեռնադրութիւնն,
ապա եթէ ըստ որոշելոյ և ըստ սահմանելոյ կանո-
նացս լիցի հաստատութիւն։ Ընդդէմ իցեն ոմանք՝
իրբև ի կամաց իւրեանց հակառակին։ Կացցէ և
հաստատեսցի բազմացն ընտրութիւն ամենայն ի-
մասաւութեամբ և երկիւղածութեամբ։

Լաւոգ. Զէ մարթ՝ որ առ ետեղ մկրտեալ է, մերձե-
դ յղբ ցուցանել յաստիճան քահանայութեան։

դ յղգ Ոչ է պարտ ձեռնադրութիւնս առնել առաջի
ուսկնդրողաց։

ժբ նա Վասն եպիսկոպոսաց, զի կամօք և ընտրու-
թեամբ՝ որ մայրաքաղաքաց եպիսկոպոսն է, և որ
շուրջ զնուլաւ եպիսկոպոսքն այսպէս զոք հաստա-
տեսեն յաստիճան քահանայութեան իբրեւ իցեն՝
որք հաստատեսցին՝ վարժք և փորձք ի գիտութիւն
բանի, ի հաւատս եւ ի վարս։

Սարգ. Ոսիոս եպիսկոպոս ասաց, և զայս կարեւոր
ժ նծդ գոլ կարծեմ, զի ամենայն ճշմարտիւ և խնամով
քննեսցի. զի եթէ ոք մեծատուն կամ քողոստիկ ի
հրապարակի է, աղաչեսցի լինել եպիսկոպոս, ոչ
յառաջ նախ կարգեսցի, եթէ ոչ նախասարկաւագի
և գրակարգացի սպասաւորութիւն կատարեսցէ. զի
ըստ ամենայն աստիճան կրթել և թէ արժանաւոր
կարծեսցի, հանել ի կամարս եպիսկոպոսութեան,
յառաջադիմութեամբ անցանել կարացցէ բայց կալ
յիւրաքանչիւր կարգի աստիճան, ոչ դուզնաքեայ
ժամանակի երկայնութիւն, որով ժամանակաւ՝ հա-
ւատ նորա և վարուցն լաւութիւն, և հաստատումն
և հեզութիւն ծանօթ լինել կտրացեն, եւ այսպէս
արժանի առ աստուածային քահանայութիւնն՝ կար-
ծեսցեալ ի մեծագոյն վայելեսցէ պատիւ։ Քանզի ոչ
պատեհ վարկայ ընդունել թեթեւութեամբ՝ եպիսկո-
պոս կամ երես կամ սարկաւագ առ ի ձեռնադրիւ
Քանզի այս իրաւապէս նորատունկ կարճեսցի, վասն
զի՝ մանաւանդ և երջանիկն առաքեալ՝ որ հեթանո-
սաց եղեւ առաքեալ, երևի աբգեւոյն՝ վաղագոյն
զկարգաւորութիւն. քանզի երկայն ժամանակի փորձ՝
զվարսն և զիւրաքանչիւր գործ և զկամս՝ զիւրա-
գոյն տպաւորել կարասցէ, ամենեքեան յասացին՝
թէ հաճոյ է նոցա, բնաւին ումեք ոչ չըջել զայ-
սոսիկ։

ԺԹ նկդ Գօղենտոս եպիսկոպոս ասաց, գիտե՞ս եղբայր Այնտիէ, եթէ յետ այնորիկ՝ անդրէն կարդաւորեալ եպիսկոպոսին՝ այսուհետեւ խաղաղութիւն հաստատեսցի. զի մի նշխարք երկպառակութեան մնացեն յեկեղեցական կանոնս, թուեցաւ և որք ի Մովսիսէ կարգեցան, և որք յետիւք ի նոցանէ. քանզի նոցա և ոչ մի ինչ մեղանք գտան զամենեսին ընդունել:

Թող. առաք.

Ժ նհե Դարձեալ ոսէ առաքեալն՝ թէ ձեռնադրեսցէ զոք եպիսկոպոսն քահանայ կամ սարկաւազ, և յանցանք ինչ լինիցին առ նմա որպէս է մարդոյ, զինչ և է աղտեղութեամբ, շնութեամբ, գողութեամբ, կամ սպանութեամբ, և ի ժամ ձեռնադրութեան՝ չգիտաց ոք, և ապա յետոյ ինքն զղջաց, և կամ զինչ և իցէ՝ պատճառաւորք յայտնեցան, ոչ կորէ սպասաւորել սեղանոյն, և ոչ պատարագ մատուցանել, այլ արտաքոյ ապաշխարել զյանցանս իւր, զԺԲ ամ. ապա որ ինչ արժանն է շնորհել՝ առաջի ներքոյ բեմին սպաւաւորել, և կալ ի պատուի, միտյն բնկեալ սրտիւ, մինչև ցօր մահուան իւրոյ:

Աթան.

Խդ շձ Հարց.— Եթէ ոք յամբոխի ձիով ընդ կուան հարկանէ՝ և սպանանէ զմարդ որ ակամայ՝ լինի քահանայութեան արժանի թէ ոչ:

Պատաս.— Վարք և կեանք մարդոյն խնդրեսցին՝ թէ սրբութեամբ են՝ իսկ վասն սպանելոյն ընդէ՛ր ոչ պահեաց աստուածային շնորհն:

Ժա շձէ

Հարց.— Թէ ոք յեղբարց՝ միականի է, կամ ունչատ, կամ ձեռնատ, և վարուք, և սրբութեամբ, և զիտութեամբ կատարեալ է, սլարտ է մատուցանել ի քահանայութիւն՝ թէ ոչ:

Պատաս.— Չէ արժան:

Կե ոա

Հարց.— Եթէ ոք ի տղայութենէ իւրմէ ի մէջ վանականաց սնեալ է մինչև ի չափ հասակին, և առեալ է յանձն զվարս միանձնութեան կուսութեամբ կեալ յաշխարհի. և ապա թուլանայցէ յայսմ խոստմանց, և առնէ կին, թէ՛ արժանի է քահանայութեան:

Պատաս.— Չէ արժանի քահանայութեան, վասն զի ընդ այնոսիկ համարեալ է, որոց երկուս կանայս արարեալ է:

ԿԳ որ Հարց.— Թէ ոք ի կուսութեան լեալ է, և կին առնէ, որ յառնէ մնացեալ է այրի, արժանի է քա հանայութեան՝ թէ ոչ:

Պատաս.— Ոչ է արժանի, վասն զի և նորա որպէս կին՝ համարեալ է երկեակ:

ԿԵ որ Հարց.— Թէ ուրուք ի տղայութեան կին արարեալ է պսակաւ և օրինօք, և ի տղայութեան կինն մեռանի. և յորժամ ի չափ հասանէ, զայլ կին առնէ, և ասէ այսպէս, թէ զառաջինն ի պէտս մարմնոյ ես ոչ գիտէի ամենկին վասն տղայութեան ժամանակին. արդ պարտ է այսպիսոյն գալ ի կարգ քահանայութեան:

Պատաս.— Չէ պարտ, վասն զի միանգամ պսակ առեալ է, այլ ոչ ևս կարէ զօրհնութեան պսակն առնուլ, յայտ է թէ՝ երկուս կին արարեալ է:

ԿԸ որ Հարց.— Թէ ոք յիրեխայութեան յանցաւոր եղեալ է ի մեղս, և յորժամ կնիք առնու՝ ի սրբութեան կայ և ի վարս ուղղութեան, թէ արժանի է քահանայութեան:

Պատաս.— Սթէ ի մեղաց ի բաց եկաց, արգար և սրբութեամբ եկաց, արժանի է:

Բարս. Իսկ զերկրորդ ամուսնութիւն ամենկին իսկ է ոլա կանոնք արգելուլն ի սպասաւորութենէ:

Բարս. Բ. Որ զինքն կտրեաց, մի լիցի քահանայ, զի ժդ ոճթ անձնասպան է:

ԺԳ որա Սպիտակոպոս կամ երեց՝ որ զերկուս ձեռնադրութիւնս ընդունի, լուծցին ինքեանք, և առնելիքն. բայց թէ՝ վասն աստուածային խրատուն՝ արգելեալ յիւր Հայրապետէն, ապա առցէ զօծումն իւր:

ԻԲ որէ Քահանայութիւն՝ է որ յԱստուծոյ է, և է որ ի սատանայէ. զի որ ուրացող է, կամ արուագէտ, կամ անասնապիղծ, կամ պոռնիկ, կամ արբեցող, կամ ընչասէր, կամ մարմնազեղծ, կամ արիւնհանգ, կամ ազաւ, կամ անողորմ, և լինի քահանայ, այն. պիտին ի հօրէ սատանայէ է. և եթէ չեն գիտակ չար գործոց նորա՝ թէ որդի սատանայի է, նա մկրտեալն և պսակեալն ի նմանէ՝ անմեղադրելի է, վասն չգիտելոյ զչարիսն, բայց ամենայն չարիք պատահին նոցա:

ԺԵ չԼ Սթէ ոք յօժարի ի քահանայութիւն, և կին նո-

- րա ի պոռնկութեան գտանի, քահանայանալ ոչ կարէ՛-
 ճծդ այլ Պոռնկորդիք կամ անհաւառք՝ թէ վարժին
 դարձութեամբ եւ սուրբ վարուք, մատչին ի քահա-
 նայութիւն, վկայութեամբ այնոցիկ՝ որ գիտակն են,
 եղիցին արժանի, զի չիք խտրի ի ձեռն աւաղանին:
- Գրեգ. Աստ. Սթէ ցանկայ ոք լինել կալիսկոպոս, ահա բար-
 ւոյ գործոյ ցանկացաւ, ըստ Պօղոսի, այլ ի հրամա-
 թ. ջծդ յերոց առաքելոցն մի՛ գտցի նուազեալ, ամենայն
 բարեձեւութեամբ գնալ առ եկեղեցականն, և առ
 արտաքինն, առաւել կայցի բան վարդապետու-
 թեան՝ սերմանել լսողաց, որպէս և տէրն ի լերինն՝
 իւրոց աշակերտացն ասաց. խրատել, բժշկել, զի մի՛
 անուէն Աստուծոյ անպատուեսցի ի ազիւտութենէն.
 զի տգէտ հովիւն անպատուելի է Աստուծոյ և սըր-
 րօցն. զի արդ լինի յանձանձիչ եկեղեցւոյ Աստուծոյ,
 որ անգիտանայ քննել զգիրս, որոյ Բանն Աստուած
 առ Հրէայան ասէր՝ ունել կեանս. և Պօղոս հրաժա-
 րեցոյց ի թղթին, որ առ Տիմոթէոս եւ Տիտոս.—
 նաև հայրն մեր երկրորդ Աբրահամ ի բնական
 նախընծայ վարդապետութեան հանապաղ ասէր,
 ոչ կալ այնպիսեացն յակաստանի այլ լուծանել հրա-
 մայէ բազում սոգտանաց փաստաւոր, զոր և մեծ
 քարոզն Հռովմայ, ի շրջաբերական կանոնեալ թուղթ-
 արն՝ ոչ է օժանել զայնպիսիսն, և զօժեալս լու-
 ծանել.— Արդ՝ որք փառամոլութեամբ, և վասն մա-
 մոնայի ձգեցան առ այսպիսի պատիւ, մերժեսցին
 յառաքելական Աթոռոյն. նաև որք ձեռնադրեցինն
 զնա, որպէս ի մէնջ Անտիոքացին, որ արծաթով
 զայս նախաձեռնէր կոչելոցն. նոյնպէս և Ղուկիոս
 Արիոսիան և Զոսիմոս, զի ոչ գիտացեալ զինքեանս՝
 կորուստ բազմաց եղևն, փորձեսցեն նախ զինքեանս,
 և ապա ի պատիւն սուրբ մատիցին, որպէս ուսոյց
 առաքեալն:
- Դիոնես. Համակարգքն՝ ոչ կարեն զմիմեանս յառաջ ա-
 Արեւսդ. ծել, եթէ յանդգնին՝ կրկին նորոգեսցին: Վերինքն
 առ ռձգ զնեքնոցն ունին, իսկ ներքինք զվերնոցն ոչ ունին:
- Ժող. Սոթ. Սոթներորդ՝ ձեռնադրել դպիր. և ապա յետ
 Սոթ. բազում աւուրց՝ սարկաւագ, և ի կատարեալ հա-
 է և սակին՝ ապա քահանայ:
- Բ. Ժող. Ամենայն ձեռնադրութիւն՝ յեկեղեցի՝ որ է
 Սոթ. պարզէք Հոգւոյն սրբոյ, զոր տայ արժանաւորացն
 ա առանց արծաթոյ՝ լիցի ըստ կանոնաց, զի այն ախտ
 ԅուդայի և Սիմօնի կախարդէ, որ խոտեցաւ և ոչ

միաբանեցաւ ընդ նոսա շնորհն Աստուծոյ, որ ի տեղիս տեղիս վասն աղքատութեան լծեալ է՝ և տգիտութեան: Այսուհետև արժանաւորքն միայն և գիտունքն առցեն զաստիճան եպիսկոպոսութեան, մեծաւ քննութեամբ և վկայութեամբ, և թեմին կամակցութեամբ առանց կաշառաց, հասակաւ մի պալլաս քան զերեսուն ամն:

դ դ Ապա զեկեալսն ի չափ հասակաւ, եւ ուսմամբ և սրբութեամբ ածցէ յաստիճան, վկայութեամբ անձաւց իւրեանց և սնուցողաց, առանց արծաթոյ, և տիօք մի պալլաս քան զիկն ամն՝ երեցն և սարկաւազն:

թ թ Գլոց դասասացքն՝ բաղմաց լիցին վկայութեամբ, որ զիտունք լինին, և ամենայն գրոց տեղեակք և վարժք, և փորձ ամենա, լւ, նմանապէս և գրոց աշակերտք, ընտրութեամբ նորին, և առաւել փորձիւ և վկայութեամբ կատարելոց:

Ե.

ՅԱՂԱԳՍ ԱՒՈՒՐՅ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԻՑ, ՆԻ ԿԻՒՐԱԿԵՒՑ.

Առաք. Կարգեցին առաքեալք՝ և եղին հաստատուէ թեամբ, թէ եղիցի տօն ծննդեան և յայտնութեան Տեառն և Փրկչին մերոյ, որ է զլուիս և սկիզբն տօնից եկեղեցւոյ՝ որ օր՝ Զ. Յունվար ամսոյ՝ ըստ Յունվարի թուոյ և մեծապէս խմբեսցեն զտօնն զայն՝ ցնծութեամբ և ուրախութեամբ, սաղմոսիւք և օրհնութեամբ և ելլօք հոգևորօք, ընթերցին գիրք մարգարէականք և առաքելականք:

ժ ժ Կարգեցին առաքեալք՝ և եղին հաստատութեամբ՝ թէ զկնի պասեքին կատարեսցեն Մ. օր, յետ յարութեան նորա, և արասցեն տօն յիշատակի վերացման նորա առ Հայր յերկինս փառաւորեալ:

ժա ժա Կարգեցին առաքեալք՝ և եղին հաստատութեամբ, թէ ի Զատիէն մինչև ի քառասներորդ ըն վերացման Տեառն, ուրախութիւն և ցնծութիւն լիցի. զի առաւրջ յարութեան են, և փեսայն յառագատի. ապա յետ տօնի վերացման պահեսցեն: Եւ դարձեալ յիսներորդ տօն կատարեսցեն՝ իբրև զառաջին Զատիկին դառն զենցի:

Գանդը. Եթէ՛ դք իբրեւ ի կարծիս պահոց՝ արհամար-
 ժը յծը հետցէ՛ զօր կիւրակէի, և ի պահոց թիւ արկ կամ ի
 գործ, որպէս զայլ աւուրս. ոչ գտցէ հանգիստ յար-
 քայութեան Աստուծոյ, և ի մեծի ժողովոյն նշովեալ
 և մերժեալ եղիցի:

Ղաւոգ. Զէ՛ արժան քրիստոնէից՝ զչրէից վարս ունել
 իթ նժը և բանդագուշել և դատարկացուցանել զօր շաբա-
 թուն, այլ գործել արժան է. բայց զօր կիւրակէին
 պատուել արժան է, և հանդչել որպէս քրիստոնեայք,
 ապա եթէ՛ գտցի ոք հրէաբար, նշովեալ լիցի:

Գրեղ. Պարտ է քրիստոնէից պատուել զօր կիւրակէի,
Լուս. աղօթել և հանդչիլ ի նմա, ապա եթէ՛ ոք պահեսցէ
 իը չի հրէաբար՝ նշովեսցի ի Գրիստոսէ:

Քաբս. Բ. Որ զօր կիւրակէին ոչ պատուեն, կամ յառաջ
 հե չծ քան զարձակել քահանայի ի թատերս ընթանան,
 կամ յայլ սատանայական դժադմունս, ընդ խաչա-
 հանունն եղիցին:

ձ չծե Որ զօր կիւրակէի և դՊենտէկոստէ՝ զպահօք
 արկանէ, քան զկարգեալս յառաքելոց, նշովեալ
 եղիցի:

ձա չծգ Որ առողջ մարմնով եւ կատարեալ հասակաւ,
 և յառաջ քան զարձակիլ ժողովրդեան՝ յաւուր կիւ-
 րակէի ճշակէ, նշովեալ լիցի, և մի ամ ապաշ-
 խարեսցէ:

ճէ չձբ Յաւուր կիւրակէի՝ մի ոք ի յեսեսցէ գործել,
 բայց միայն զկերակուրսն, զի զհիւրսն ընկալցին,
 և աղօթից ստէալ կացցեն:

ճկե սլխա Այր հաւատացեալ՝ ո՞ր յաւուր կիւրակէի զձայն
 աւետարանի ոչ լսէ, ընդ խաչահանունն է, բայց թէ
 անհնարին է:

Գրեղ. Կարդեսցէ զտօնս տէրունականս եպիսկոպոսն՝
Աստ. իւրոյ եկեղեցեացն հրաման տալ կանոնական, ի Զ.
 իթ ջհ Յունվարի տօն ծննդեան և յայտնութեան Փրկչին
 մերոյ. ի Ժ՛Ի. Փետրուարի եկաւորին ի տաճարն
 քառասնօրեայ:

ձ ջհ: Տօն սրբոյ պասեքին՝ յետ հասարակելոյ տուն-
 ցեան և զիշերոյ, պահք սրբոյ պասեքին՝ խ. օր,
 հանդերձ չաբաթիւ և կիւրակէիւ, որպէս կանոնեցին
 առաքեալք Տեառն, և սուրբ Տիեզերական ժողովն՝
 ՅԺԸ-ից հարցն, որ ի Նիկիա Բիւթանացւոց ժողո-
 վեցան: Եւ լուծանեմք ի չաբաթիւ - և ի կիւրակէի

պաշտամամբքն միայն և սուրբ և մեղսաքաւիչ պատարագաւն, այլ ոչ ըմպելեօք կամ պարտրտ կերակրովք:

Լա նղը Տօն յարութեան Տեառն՝ երկրորդ Զատիկն՝ Նոր-կիւրակէն՝ Համբարձմանն Տեառն քառասնօրեայ երեսեալ յերկրի, ի յօբելեանսն՝ զալուստ Հոգւոյն, սրբոյ:

Յաջ. Կանոնք և սահմանք, զոր ընդունի եկեղեցի՝
Եւս. ի տօն ծննդեան և յայտնութեան Տեսուն մերոյ և
ա ոհա Փրկչին Յիսուսի Քրիստոսի, և ուխտադրութիւն հաւատացելոց՝ այսպէս, բայց յաւուրս շաբաթու և միաշաբաթի, զառաջակայսն չափել, պահովք ապաշխարողաց և այրեաց քահանայից, և ուխտի մանկանց եկեղեցւոյ, զառաջիկայսն պահել պահօք յօտարամուտ իորհրդոց, զաւուրս ևս ութ՝ բովանդակ հաւատացելոց, զշաբաթ և զմիաշաբաթն, ընդ նմին ծիրք և տղայք պահեսցեն, և զտօն աստուածայայտնութեան, յորում աւսուր դիպեսցի՝ կատարեսցեն՝ զծննդեան և զմկրտութեան, վասն զի աստուածայինք ևն և փրկագործ:

ա. Հեպոդ. Ըստ աւետեաց յիշատակին, լինամանայ ծր-
ա ոհա նեալ Տէրն իմ, և երեսնամեայ մկրտեցաւ ի նմին աւուր՝ ըստ Ղուկասու աւետարանչին. «Եւ Յիսուս էր իբրև ամաց երեսնից». և յետ սակաւուց զմկրտութիւնէն ճառէ, վասն զի անմամս էր յայլում աւուր ծնանիլ Բանին Աստուծոյ, և յայլում մկրտիլ, և թերահաւատութիւն ի միջի արկանել, զի զայլ ծնեալ և զայլ մկրտեալ խոստովանեցան, վասն զի երկուս որդիս, և երկուս բնութիւնս, և երկուս դէմս խոստովանեցան, և այնը աղագաւ՝ յերկուս տօնս յեղափոխեցին, որք ոչ հնազանդեցան առաքելական հրամանին, և անհնազանդք էին և ուխտադրութք: Իսկ եկեղեցին հաստատեցաւ այսպիսի տօնիւք, ի միում աւուր տօնել զծննդեանն և զմկրտութեանն, և պատուել՝ այսպէս՝ այրիք և ապաշխարողք և եկեղեցւոյ մանկունք, քահանայք և վանականք, եօթնից յեօթնեակ չափեսցեն պահօք. բայց միայն ի շաբաթին և ի միաշաբաթին, և յաւուրս տօնեկին, Ը. օր համօրէն հաւատացելոց եղիցի պահք, շաբաթն և միաշաբաթն՝ և յաւուր՝ յորում դիպեսցի՝ տօն Տեառն կատարեսցին:

Նեկտ.
Հարմ.
Եպիս.

Սահմանք և ուղղափառութիւնք, որ վայել է եկեղեցւոյ, յառաքելոց հրամանացն հաստատեալ,

ա ռհգ ընդ նոսին ընկալաք և աւանդեմք եկեղեցւոյ Գրիս-
տոսի, զոր սուրբ Հարք հաճութեամբ ընկալան, ըստ
Մովսիսեան եօթնեկին՝ եօթնէից եօթնեակք ունին՝
զազատութիւն ի մարմնական ծառայութենէն: Խսկ
Գրիստոսի եօթնեակքն՝ զոր ընկալաւ եկեղեցի, ու-
նի զազատութիւն անծառայական, որ ի ծնունդն
հնչեաց Գրիստոս ի ծագս հեթանոսաց. և այսպէս՝
ուխտագրութեամբ պատուեալ միայնացեալք տնա-
պատականք, քաղաքականք, ազգաշխարհք և այլիք,
սրբասնեալ մանկունք եկեղեցւոյ ուխտիւ յանձին
կալեալ պահօք և աղօթիւք, դաւուրս քառասունն.
բայց համօրէն հաւատացեալք, ծերք և տղայք՝ գու-
թրն օրն, զարաթն և զմիաշարաթն ընդ նմին պա-
հեսցեն, և զտօն աստուածայայտնութեան՝ զծննդն-
դեանն ասեմ և զմկրտութեան, վասն զի աստուա-
ծայինք և տէրունականք՝ յաւուր՝ յորում դիպեցի,
ի նմին կատարեսցին:

Մեղեմ.

Եպէս.

ա ռհե միացեալ, անշփոթ և անորիշ ի միմեանց միացեալ,
և մի լեալ անքակտելի, տօնեմք ըստ հրեշտակի ա-
ւետեացն. իննամսեայ զծնունդն, ութօրեայ պթըլ.
պատուութիւն, քառասնօրեայ զգալն ի տաճարն՝ ի
լրումն օրինաց, երեսնամեայ զմկրտութիւնն, և պա-
տուել այսպէս՝ զծնունդն և զմկրտութիւնն ի նմին
աւուր տօնել. եօթնեակօք չափ պահել կրօնաւորաց
և քահանայից ապաշխարողաց և այլեաց և ուխտի
մանկանց եկեղեցւոյ՝ պահել միապէս, Խ. օր. բայց
միայն զշարաթ և զմիաշարաթ ընդ նմին պահեսցեն
ծերք և զինուորք և եկեղեցւոյ մանկունք որպէս
զաւուրս յօրելեանս. բայց զտօն աստուածայայտ-
նութեան՝ յաւուր յորում հանդիպեսցի, ի նմին ա-
ւուր տօնեսցեն, տօն ծննդեան և յայտնութեան:

Սեեբ.

թէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր՝ ա-
ա ռհէ ռաւել քան զգպրացն և զիարիսեցւոց, և թէ ոք պա-
կասեալ գտցի, որպիսի ստատոյ պատժապարտ գտա-
նիցի. զի եթէ հրեշտակաց խօսիւք հառտատեցաւ
բանն, և ամենաստուղնգանողն պատժապարտեցաւ.
քանի՜ ևս պատուհաս ի վերայ յանցանաց՝ որ ի վե-
րայ կատարելութեան՝ թերակատարք գտանիցին:
Ձի փարիսեցիք պարծէր, պահեմ երկիցս ի շաբա-
թու. և որք ուխտադրութեք գտանիցին, քան զփա-
րիսեցիք՝ ևս հաճոյանաց արժանի են նոքա, որ ոչ
առաւելան արդարութեամբ, այլ. և՛ պակասեալ ևս

գտան, և այս յետին անմտութիւն է, զի յօրինացն հրաժարին. և ի շնորհս ոչ դադարին, և զինչ կամին լինել՝ քաջ գիտեմ, ի հեթանոսութիւն կամին դառնալ և ի զոհարեր ճենճերսն վայելել: Վասն զի նախնիքն՝ երկուս առուրս ի շարաթուն սրահեցին, զմին՝ վասն բանսարկուն յանցանաց՝ և Սւայի անկմանն, և զմիւսն՝ Ագամայ պատրանացն և ելանելոյն ի դրախտէն. և վասն այնպիսի պատճառանաց՝ հարժն մեր պիշատակ սրբոց առուրցս այսոցիկ, յառաջակայսն անցուցին. բայց միայն զԱստուծոյն և զԱստուածորդւոյն՝ ուր և հանդիպեցի՝ կատարել զայն. զի Աստուած է՝ և զամենայն լուծանէ, զծննդեանն ասեմ և զմկրտութեան. զինա ծոմացուցանէ առուրս Ը. հաժօրէն ամենայն հաւատացելոց, զշարաթն և զմիաշարաթն, և զտօն Աստուածայայտնութեան, յորում առուր դիպեցի կատարեսցին:

Ասկը.

Հանդէս ՅծԸ-իցն՝ յառուրս մեծին Կոստանդիանոսի ժողովոյն՝ հաստատեցին ի մի սահման հաւատոյ, այլք յօժարէին զառաքելականն հաստատել զկարգս, բայց Նւեբի, Պանփիլիա, և Աթանաս եպիսկոպոս Աղէքսանդրիոյ, միաձայնեալ միաբանեցին զսուրբ եպիսկոպոսն, և հաստատեցին ըստ Մովսիսեան յորելինին՝ զտօն պասեքին, վասնորոյ առաքեալք՝ յողորմեան հաստատեցին. և այլք ըստ լուսնին՝ յերեսներեակն կատարէին: Բայց Նւեբի, Պանփիլիա երկրորդ առաքելոցն՝ փոխանակ Մովսիսեան փողոյն՝ զգարրիէլեան փողն ետես ի վերայ լիմին. փոխանակ անդ ազատութեան զատապարտելոցն, աստ օտարացելոցն ժողովումն Սաայեայ ձայնն յայտնէ, թէ իցեն մեղք ձեր արեամբ թաթաւսլ, յասրութիւն վերաբերից, եթէ իցեն մեղք ձեր կռամոլութեամբ խցեալ՝ ի ձեան սպիտակութիւն ածից: Սա յիսկզբանց եօթնեկին՝ եղև սկիզբն ըստ կարգին Մովսիսի օրինադրութեան. զոր օրինակ՝ ի Մովսիսեան եօթնեկին, շարար թողութիւն մինչև ցԾ-նեակն, նոյնպէս և աստ չերի խտրոց ի միջի մինչև ցԾ. օր. ըստ այնմ չափեցից, և այս եղիցի կարգադրութիւն հաւատոյ, և եթէ ոք ի սմանէ զօր թերացուցանէ ի շարաթու կամ ի միաշարաթու որկրամոլութեամբ, սակս անարժան կերակրոց, լիբբ և խայտառակ խորհրդով ընդդէմ Հարցն, միոյն փոխարէն՝ քառասուն պահեսցէ, տուգանս յեկեղեցին՝ ըստ կանոնի հրամանացն տացէ:

Բ ոյիը

Նւ որ զառաքելական սահմանս կանոնաց քայ-

քայն, որպէս պատուիրեցին, թէ ի շորեքշարաթի
և յուրբաթի, հասարակաց հաւատացելոց՝ ուխտ
սյահոց եղիցին, և որք լուծանեն զշարմանս առա-
քելականս, իրրև առուր եօթանց շաբաթուց պա-
հոցն՝ պատժապարտեսցին. և թէ որ մասամբն տօ-
նախմբութեամբք յանդգնեսցի սակս որովայնի, և-
զիպտական բազում աստուածոցն հաւոստէ, որ ոչ
փրկութեան տօն կատարեն, և որք միաբանին այսմ
կանոնիս մեր՝ հաւասարին, և որք ընդդէմ հակա-
ռակին. ի մէնջ և յեկեղեցւոյ նզովեսցին:

Դիմեն.

ա ռհթ

Ձի արժանացաւ զԱստուած բանն հօր՝ յառաջ
քան զժամանակս ծնեալ, և ժամանակաւ ծնեալ՝
կեանս աշխարհի ընծայել. վասնորոյ և Աստուածա-
ծին, և եկեղեցի հեթանոսաց հրապարակազօշ ձայ-
նիւ՝ ամ յամէ տօնախմբէ գլխատակ նորա, զի այս-
պէս՝ միծարգի արար զորդիս մարդկան, ըստ ոյ դ-
ւոյ իւրում, պատուեացուք գլխատակս նորա՝ մեծա-
պայծառ տօնիւք ի միաշաբաթի առուր, ներբողիւք
զերգս օրհնութեան մատուցանեմք որդւոյ իւրում:

Մանուէլի

ա ռձ

Ի ձեռն Կոստանդիանոսի մեծի՝ հաստատեցաւ
տօնախմբութիւն սրբոյ խաչին՝ ըստ հռոմոց տու-
մարին, ի ԺԴ. սեպտեմբերի, ոչ ի նմին առուր կա-
տարել զտօնախմբութիւն, զի հանապաղ ի նոյն
յարութեան չքնաղ եղանակաւոր ձայնիւք պատուին
տօնք տէրունին խաչին, Վասնորոյ հարկեցաք ոչ
յայլ օր տօնել, այլ ընդ Քրիստոսի յարութեան՝
զփրկագործ տօնախմբութիւն տէրունական խաչին:

Յովհ.

Լմաստ.

Իզ ռմթ

Պարտ և արժան է ի յայտնութեան առուր կա-
տարել զՂրոյն օրհնութիւն ի վերայ ջուրցն, ըստ
պատշաճի ի տեղիսն հանդիպեալ ձէթ արկանելով ի
նմա և աղօթս մատուցանելով, ի ձեռն այնորիկ յի-
շատակել զառ ի Փրկչին վասն մեր ի Յորդանան
զմկրտութիւնն, որպէս և ի զալստեան առուր՝ ոստս
բառնալ և ճոճանակս շարժել, զնմանութիւն բերե-
լով մօնկանց երբայեցւոց ծափելոյն և ոստս մա-
տուցանելոյն, զի և աշխարհիս մերոյ մարդկան և ա-
մենայն քրիստոնէից՝ աւանդութեամբ կալեալ է զնոյն:

Լ ռմթգ

Արժան է ի յայտնութեան առուր՝ ի Մատթէո-
սի գլխոյն, զմկրտութեան կարգին ընթեռնուլ զԱ-
ւետարանն, այլ յամենայն իսկ ութօրեայս խառնել
պատշաճ համարիմ ընդ ծննդեան աւետարանս՝ ըզ-
մկրտութեան աւետարանն. զի որպէս տօնն հասա-
րակաց, երկուցունց հոսարակարմր պարտի լինել
կարգացմունքն և պաշտօնն: